

Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
հոկտեմբերի 20-ի N 1546 - Ա որոշման

**ՀԱՏՈՒԿ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ
ՊԱՀԱՆՋՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ
ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՊԱՇՁԲ - 10/9-2 - ՀՀ ԿԱ Ո-ԱԲ2011**

**GENERAL PROCUREMENT CONTRACT
of works of printing state documents
requiring special security
N SWA-10/9-2 RA P-PB 2011**

ք. Երևան ----- 2011թ.

c. Yerevan "-----"-----2011

ՀՀ ոստիկանությունը, (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գեներալ-լեյտենանտ Հ. Հունանյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Օբերտուր Թեքնոլոջիս» ԲԸ-ն, (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս Նույնականացման Փաստաթղթերի Բաժնի Ծրագրի Ղեկավար Քանտեն Դըլիլի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

The Police of RA, represented by H. Hunanyan, police lieutenant general, deputy head of the Police of RA, (hereinafter Customer), acting according to the RA Police Legislation on one side, and Oberthur Technologies S.A., represented by Quentin Delisle, the Identity division Project Manager, (hereinafter Contractor), acting according to the Company Regulation on the other part, signed this contract on the following:

1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1. Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուի համար կատարել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված **աշխատանքներ** (այսուհետ՝ Աշխատանք) CIP Երևան պայմանով, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Աշխատանքը և վճարել դրա համար:

1.2. Կապալառուն Աշխատանքը հասցնում է Պատվիրատուին:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի կողմից կատարվող աշխատանքների ըն-

1. Subject of contract and term of validity

1.1 The Contractor is obliged to provide the works stipulated by the Technical Specifications determined by Annex N 1 of this Contract (hereinafter Works), in accordance with the order determined by this contract, in envisaged volume, form and terms to the Customer on CIP Yerevan delivery terms and the Customer is obliged to accept these Works and to pay for them.

1.2 The Contractor delivers the Work to the Customer.

2. Rights and Obligations of the Parties

2.1 The Customer is entitled to:

2.1.1 Check the process and the quality of the Works provided by the Contractor

թացքը և որակը՝ առանց միջամտելու Կապալառուի գործունեությանը.

2.1.2. Առանց Աշխատանքի արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուի կողմից կատարված Աշխատանքները չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածում նախատեսված Տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին և (կամ) խախտվել է Աշխատանքների կատարման ժամկետը և Աշխատանքները չի կարող կատարվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

2.1.3 Չընդունել Աշխատանքների արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին և Տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատուց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը.

2.1.4. Մինչև Աշխատանքների արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Կապալառուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Կապալառուին:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան կատարված Աշխատանքների արդյունքը, իսկ Աշխատանքների արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կապալառուին:

2.3. Կապալառուն իրավունք ունի՝

2.3.1. Պատվիրատուից պահանջել ընդունելու սույն պայմանագրին համապատասխան կատարված Աշխատանքների արդյունքը.

2.3.2. Մինչև Աշխատանքների արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու փաստացի կատարված Աշխատանքների համարժեք գինը՝ բացա-

without interfering with the Contractor's activities.

2.1.2 Liquidate unilaterally this contract without paying for the result of the Works and demand the compensation of the damages caused to him/her, if the Works provided by the Contractor do not comply with the requirements determined by the technical specification envisaged by Annex N1 of this contract and (or) if the term of providing the Works has been violated and the Works cannot be provided in terms acceptable for the Customer.

2.1.3 do not accept the result of Works in case of incompliance with the provisions determined by RA legislation and requirements envisaged by the Technical Specification, determining at his/her discretion a reasonable period for unpaid elimination of faults and to demand from the Contractor to pay the penalty and the fine envisaged by points 5.2 and 5.3 of this Contract.

2.1.4 Waive the execution of this contract at any time before presenting the result of the Works to the Customer, compensating the damages caused to the Customer in the consequence of waiving, notifying about it the Customer at least 30 days earlier.

2.2 The Customer is obliged to:

2.2.1 Discuss and accept the result of Works provided in compliance with the Technical Specification, and in case of discovering faults in the Works' results, immediately inform the Contractor about it in written form.

2.3 The Contractor is entitled to:

2.3.1 Demand from the Customer to accept the result of Works provided in compliance with this contract.

2.3.2 Demand from the Customer to pay the adequate cost of the factually provided Works in case of waiving by the Customer the execution of this contract at any time, before presenting the result of Works to

նությամբ սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքի:

2.3.3. Մինչև Աշխատանքների արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Պատվիրատուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով:

2.3.4. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 1.1 կետում նշված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4. Կապալառուն պարտավոր է՝

2.4.1. Սույն պայմանագրով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքների կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2. Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.3. Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.4.4. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

3. Աշխատանքների հանձնման և ընդունման կարգը

3.1. Կապալառուն Աշխատանքների (Աշխատանքների առանձին փուլի) կատարման ավարտից 2 /երկու/ աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

3.2. Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 /հինգ/ աշխատանքային օրվա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ

the Customer, except for the case envisaged by point 2.1.2 of this contract.

2.3.3 Waive the execution of this contract at any time before presenting the result of Works to the Customer, compensating the damages caused to the Customer in consequence of waiving, notifying about it at least 30 days earlier.

2.3.4 Demand to pay the amounts subject to be paid and the fine stipulated by point 5.5 of this contract in case of breach of the term indicated in point 1.1 of this contract by the Customer.

2.4 The Contractor is obliged to:

2.4.1 Ensure the provision of the Works on conditions determined by this contract, guided by the legislation in force.

2.4.2 Compensate the damages caused to the Customer in case of liquidation of this contract on bases stipulated by point 2.1.2 of this contract.

2.4.3 Ensure the unpaid elimination of faults within a reasonable term determined by the Customer in case stipulated by point 2.1.3 of this contract and pay the fine stipulated by point 5.2 of this contract to the Customer.

2.4.4 Pay the fine and penalty stipulated by points 5.2 and 5.3 in cases envisaged by this contract.

3. Order of Delivery and Acceptance of Works

3.1 The Contractor submits two copies of the Report on Delivery and Acceptance on the provided Works signed by himself/herself to the Customer within 2/two/ working days after the end of provision of the Works (separate stage of Works) (Annex N3).

3.2 The Customer submits one copy of the Report on Delivery and Acceptance signed by himself/herself or the reasoned refusal to accept the Works within a period of 5/five/ working days from the moment of

օրինակը կամ Աշխատանքները չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.3. Կապալառուի կատարած Աշխատանքների արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

4. Պայմանագրի գինը

4.1. Մեկ միավորի արժեքը կազմում է 1.6 €, առանց ԱԱՀ: Կատարած Աշխատանքների գինը՝ ներառյալ ԱԱՀ-ն, (հավելված 2) կազմում է 72 699 798.50 դրամ (յոթանասուներկու միլիոն վեց հարյուր իննսունինը հազար յոթ հարյուր ինսունութ դրամ հիսուն լումա), որից 12 116 633.10 դրամը (տասներկու միլիոն մեկ հարյուր տասնվեց հազար վեց հարյուր երեսուներեք դրամ 10 լումա) կազմում է մաքսազերծման հետ կապված ծախսերը, որը Կապալառուի փոխարեն իրականացնում է Պատվիրատուն: Պայմանագրի ստորագրման օրը Կենտրոնական Բանկի հաշվարկային կուրսը կազմում է 1 € = 526.40 դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում փոխադրման, ապահովագրման, այլ վճարումների գծով ծախսերը:

4.2. Պատվիրատուն իրեն կատարած Աշխատանքների դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ 10 բանկային օրվա ընթացքում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ուշ, քան դեկտեմբերի 25-ը: Եթե ընդունված Աշխատանքների դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

4.3. 2012 թվականի ընթացքում ձեռքբերվող 360 000 հատ ՀՀ քաղաքացու անձնագրերի գրքույկների (բլանկների) համար գումարի վճարումը Պատվիրատուն կիրականացնի այդ

receiving the Record on Delivery and Acceptance.

3.3 The result of Works provided by the Contractor is considered to be accepted by the Customer from the moment of bilateral signing of the Report on Delivery and Acceptance.

4. Price of Contract

4.1 The price per unit is 1.6 € exVAT. The price of the Works, including VAT (Annex 2) is 72 699 798.50 AMD / seventy-two million six hundred ninety-nine thousand seven hundred ninety-eight AMD and fifty luma/, of which 12 116 633.10 AMD (twelve million one hundred sixteen thousand six hundred thirty-three AMD and ten luma/ is for customs clearance expenses and is covered by the Customer instead of the Contractor. The exchange rate determined by the RA Central Bank as of date of contract signing is 1 € = 526.40 AMD. The price includes all expenses to be done by the Contractor including transportation, insurance and other payments.

4.2 The Customer pays for the provided Works not in cash, by means of transferring the monetary means to the Contractor's account number. The transfer of the monetary means is carried out on the basis of the Record of Delivery and Acceptance within 10 banking days (if the Record is drawn up after the 20th of the given month, then the payment is made within 20 banking days) but not later than December 25. If the means stipulated by the payment schedule are insufficient for paying for the accepted Works, then the payment, in accordance with conditions of this point, is carried out in the month, in which the monetary means are stipulated.

4.3 The amount of 360 000 pcs. of Passport books (forms) for RA citizens to be procured during the year 2012 will be

նպատակով 2012 թ. համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում 2012 թ. բյուջեի կատարման եռամսյակային համասնություններին համաձայն:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքների կատարման որակի և սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման, ինչպես նաև 2.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքները չընդունվելու, Աշխատանքները չկատարելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ համապատասխան պայմանագրի գնի 0,5 տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,05%-ի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքներ կատարելու արդյունքում Կապալառուին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

paid by the Customer in case the financial means are allocated for 2012 for this purpose and according to quarter result of 2012 state budget realization.

5. Responsibility of Parties

5.1 The Contractor is responsible for the quality of the provided Works and maintenance of requirements stipulated by Annex N1 of this contract.

5.2 In case of liquidation of the contract on the bases stipulated by point 2.1.2 of this contract, as well as in case of non-acceptance of the Works by the Customer on the bases stipulated by point 2.1.3, in case of not providing the Works, a penalty in the size of 0,5% of the Contract price is levied from the Contractor.

5.3 In case of non-performance or not proper performance of the obligations assumed by this contract a fine in the size of 0,05% of the contract price is levied, and the calculation of the fines is carried out by calendar days in regard to the price of the unexecuted part of the Contract.

5.4 The penalty and fine stipulated by points 5.2 and 5.3 of this Contract are calculated and transferred from the amounts subject to be paid to the Contractor as a result of provision of the Works.

5.5 For the violation of the term stipulated by point 1.1 of this contract by the Customer, a fine is calculated for each overdue day towards the Customer in the amount of 0,05% of the sum subject to payment but not paid.

5.6 In cases not stipulated by this contract the parties bear responsibility for non-performance or not proper performance of their obligations in accordance with order determined by RA legislation.

5.7 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.8 Տուգանքի և տույժի վճարումը չի կարող կարող գերազանցել պայմանագրի ընդհանուր գումարի 10% տոկոսը:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Այլ պայմաններ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ գնման ընթացակարգի արդյունքների հաստատելուց հետո, իսկ 2012թ. համար գնում կարող է կատարվել այդ նպատակով անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որի մասին կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

5.7 The payment of a penalty and a fine does not release the Parties from performance of their contractual obligations.

5.8 The payment of total penalty and fine can not reach more than 10% of the price of the contract

6. Force Majeure

The Parties are released from the liability for not fulfilling their obligations partially or completely under the present Contract if it was caused by the circumstances of Force Majeure, which emerged after the conclusion of the present Contract, and the Parties could not foresee or prevent them. Such circumstances are earthquake, flood, fire, war, announcement of military or state of emergency, political troubles, strikes, lockout of communication means, acts of state bodies, etc, which make the fulfillment of the obligations by the present Contract impossible. If the force majeure circumstances last longer than 3 (three) months, than each Party will be entitled to annul the Contract notifying the other Party on it beforehand.

7. Other Conditions

7.1 This contract comes into force after approval of the procurement procedure results by the Government of the Republic of Armenia; the procurement for the year 2012 can be done only in case the necessary financial means are allocated for this purpose, for which the additional agreement should be signed. In case, when the financial means are not

Այն դեպքում, երբ 2012 թ. աշխատանքների կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարում չեն նախատեսվում ֆինանսական միջոցներ, ապա այդ մասով սույն պայմանագիրը լուծվում է:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև գնման պայմանագրի կնքումը կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ կապալառուին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կապալառուն պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է Պատվիրատուի համաձայնությամբ:

Սույն պայմանագիրը չի կարող մասնա-

allocated for the implementation of the works for the year 2012, the contract with regards to this part should be annulled.

7.2 In case, when as a result of the control of meeting the requirements of the Republic of Armenia legislation on procurement in accordance with the order determined by the law or as a result of consideration of complaints it is recorded that in the process of procurement before the signing of the procurement contract the Contractor has submitted false documents (information and data) or that the decision of acknowledging (choosing) the Contractor as the winner does not comply with the Republic of Armenia legislation, then, after the appearance of these grounds, the Customer is entitled to liquidate unilaterally the procurement contract, if the recorded violations before the signing of the procurement contract would be a basis in accordance with the Republic of Armenia legislation for not signing the procurement contract. Besides, the Customer does not bear the risk of damages caused or profit lost for the Contractor emerging in the consequence of the unilateral liquidation of the contract, and the Contractor is obliged to compensate the damages caused to the Customer in the volume, which is not covered by what the Customer had received from the procurement contract execution before its liquidation.

7.3 Amendments and additions can be made to this contract only by mutual consent of the parties through of signing a new contract, which will become the inseparable part of this contract.

In the course of execution of the contract the change of the subcontractor is carried out by the Customer's consent.

This contract cannot be partially or

կիրեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

Աշխատանքների կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում պայմանով, որ՝

ա) Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

բ) եթե դա Պատվիրատուի գործողության կամ անգործության հետևանք չէ:

7.4 Եթե պայմանագրի գնի հիմնավորվածության և արժանահավատության փորձաքննության արդյունքում պայմանագրի գինը որակվում է շուկայական գնից 10 /տասը/ տոկոս բարձր, և պայմանագրի կողմը չի համաձայնում այդ չափով գնի նվազեցմանը, ապա Պատվիրատուն պայմանագիրը միակողմանիորեն լուծում է և չի կրում պայմանագրի լուծման հետևանքով առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2 և 3 հավելվածները՝ բաղկացած _____ թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ

wholly liquidated by mutual consent of the Parties, except for the case of reduction of financial allotments necessary for accomplishment of the given procurement in accordance with the order determined by Republic of Armenia legislation.

The term of providing the works may be extended before the expiration of this term in case of presence of a suggestion of a contract party, on condition that;

a) The demand of the use of the procurement subject has been eliminated;

b) If it is not a consequence of the Customer's action or inaction.

7.4 If as a result of expertise of the contract's price substantiation and trustworthiness the contract price is qualified as 10% higher than the market price, and the contract party does not agree to reduce the contract price in this size, then the Customer liquidates the Contract unilaterally and does not bear the risk of the damages caused or the profit lost in the consequence of liquidation.

7.5 The disputes arisen in regard to this contract are settled by means of negotiations. In case of not coming to an agreement the disputes are settled in judicial order.

7.6 This contract and the Annexes thereof are drawn up in 4 pages, signed in 2 copies, which have equal legal force; The Annexes NN 1, 2 and 3 of this contract consist of _____pages and are the integral part of the contract; one copy is given to each party.

7.7 The payment liability of the party arisen from this contract cannot be ceased by a counter liability setoff arisen from another contract, without a written and sealed consent of the parties. The right of claim arisen from this contract cannot be

անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

transferred to another person, without the written consent of the indebted party.

7.8 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

7.8 RA Law is applied in regard to this Contract.

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

8. The Addresses, Banking Requisites and Signatures of the Parties

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013150041
ՀՎՀՀ 01840082
հեռ. 0037410 59-61-52
Էլ. փոստ: police-gnumner@rambler.ru

CUSTOMER

Police of RA
130 Nalbandyan Str. , Yerevan, RA
RA Finance Ministry Administrative
Operations department
Acc.No: 900013150041
TIN: 01840082
Tel: 003741059-61-52
E-mail: police-gnumner@rambler.ru

_____ Հ. Հունանյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/
(ստորագրություն)

_____ H. Hunanyan
/Deputy head of the RA Police/
(signature)

Կ.Տ

S.P.

Կ Ա Պ Ա Լ Ա Ռ ՈՒ

“Օբերտուր Թեքնոլոջիս” ԲԸ
Նույնականացման Փաստաթղթերի Բաժին
50, Քե Միշելե փ., 92300 Լեվալուա-Պերե,
Ցեդեքս, Ֆրանսիա
ՀԿ 340 709 534 00242
Հաշիվ BIC FR76 3000
3017000002005829883
Սվիֆտ կոդ՝ SOGEFRPP
“Սոսիետե Ժենեռալ” Բանկ
P/C բանկային հմկ.
Էլ. փոստ:communications@oberthur.com

CONTRACTOR

OBERTHUR TECHNOLOGIES S.A.
Identity Division
50, Quai Michelet – 92532 Levallois Perret
CEDEX, France
Tax payer’s code 340 709 534 00242
Acc.BIC FR76 3000
3017000002005829883
SWIFT code: SOGEFRPP
SOCIETE GENERALE
P/C banking
E-mail: communications@oberthur.com

_____ Բ. Դելիլ
/Ծրագրի ղեկավար/
(ստորագրություն)

_____ Q. Delisle
/Project Manager/
(signature)